



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ
ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ, ԵՐԵՎԱՆԻ ՔԱՀԱՆԱՅԻՑ ԴԱՍԻ ԵՎ
ՊԱՇՏՈՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴԱՅՆՎԱԾ ՀԱՎԱՔՈՒՅԹԻՆ

Մենք բոլորս տեսնում ենք հոգեկան մխիթարությամբ, որ հետզհետե լայն ասպարեզ է բացվում հոգևոր կյանքի, եկեղեցական կյանքի առջև, ընդհանրապես Սոփեո Միությունում, և մեր երկրում, Հայաստանում, Պոլսում և անբնիկ Սփյուռքում: Վերջին երկու տարվա ընթացքում 27 նոր վանքեր և եկեղեցիներ բացվեցին, որոնցից շատերը արդեն գործել լսկած են: Գիտեք նաև, թե մեր ժողովուրդը հոգևոր սնունդի ծարավով դիմում է դեպի մեզ, դեպի մեր եկեղեցին, որպեսզի հոգեկան մխիթարություն ստանա մանավանդ այս տագնապալի շրջանին:

Իրապես գործունեության լայն դաշտ բացված է մեր առջև: Սակայն տրված լինելով, որ վերջին տասնամյակներին և նրանից առաջ էլ, մեր ժողովուրդը լրիվ չափով կրոնական դաստիարակություն չէր ստացել, հետևաբար այսօր թեև հոգևոր սնունդ որոնելու միտումը կա, սակայն հստակության պակաս կա նրա հոգու մեջ: Մեր ժողովուրդը պատրաստ չէ կրոնական տեսակետից զանազանելու ճիշտը սխալից, հարազատը ոչ հարազատից, պատահականը հիմնականից, մնայունը անցողականից: Եվ տեսնում ենք, թե ինչքան շփոթություն է բերում մեր ժողովրդի մտայնության մեջ, հոգևոր, կրոնական կյանքի և ուսմունքի գկատմամբ: Տարբեր-տարբեր հոսանքներ են հառաջ գալիս, որոնք անհարազատ են մեր սրբազան ավանդություններին, մեր բազմադարյան Եկեղեցուն, որոնք անհարազատ են նույնիսկ Քրիստոսի Սուրբ Ավետարանին:

Հետևաբար ես հարմար եմ նկատում մի քանի ճշտումներ կատարել: Ես ոչ մի նորություն չպիտի ասեմ ձեզ, պարզապես պիտի ընդգծեմ, պիտի

հաստատում այն, ինչ որ դարերի հողովորդով, մեր ժողովրդի հոգևոր կյանքի փորձառություններով, մեր Եկեղեցու զարգացման ճանապարհով եկած են մեզ իբրև սրբազան ժառանգություն, որի հիմքի վրա միայն մեր ժողովուրդը կարող է իր հոգևոր կյանքը կազմավորել և արտահայտել իբրև քրիստոնյա ժողովուրդ, իբրև վավերական հարազատ քրիստոնյա ժողովուրդ:

Կրոնական ապրումը գերազանցապես մարդկային բնական երևույթ է: Անշուշտ այլ բնագավառներում, պատմության ընթացքին, մասն կրոնական ապրումը իր զարգացման փուլերը ունեցած է: Նախապատմական հին շրջաններում, մարդիկ պաշտած են կուռքեր, անասուններ և բնության տարերքներ: Հաջորդ շրջանը եղած է բազմաստվածյան կրոնքների շրջան, երբ կուռքերը ստացան մարդկային գեղադեմ կերպարանք: Հիշեմ այստեղ երեք բազմաստվածյան կրոններ՝ եգիպտականը, սկանդինավյան-գերմանականը, հելլենա-հռոմեականը: Ես չեմ ուզում մանրամասնությունների մեջ մտնել, բայց ինչքան էլ գեղեցիկ էին արտաքինապես այդ չաստվածները, մանավանդ հելլենականները, որոնք գեղարվեստական արժեք ներկայացնող գլուխգործոցներ են, սակայն խորքի մեջ նրանք էլ բնության տարերքի հետ կապված դիցապաշտական կրոնքներ էին, որոնք գուրկ էին բարոյական մկարագրից, որոնք օժտված էին մարդկային ամեն տեսակի տկարություններով, կիրքերով և մեղքերով: Բազմաստվածյան կրոնները փաստորեն անաստված կրոններ էին: Նրանց դիցաբանությունը (կրոնի պատմությունը) առասպելների հավաքածուներ էին:

Առաջին ժողովուրդը, որում պատկանում է պատիվը բնապաշտական կրոնքներից ձերբազատվելու և հասնելու միակ Աստուծո բարոյական գաղափարին, դա հրեա ժողովուրդը եղավ՝ Աբրահամով: Աբրահամը այն առաջին մահկանացուն էր, որ հասավ միաստվածության գաղափարին: Եվ սա մարդկային պատմության կյանքի ճանապարհին գուցե ամենամեծ հեղաշրջումն էր կրոնաբարոյական իմաստով: Այսպես, ծնունդ առավ միաստվածության ճշմարիտ կրոնքը, ուր այլևս աստվածներ չկային, ինչպես հեթանոսական շրջանում, այլ մի Աստված կար, մա էլ խորհրդանշում էր բարին, արդարը և մարդասիրությունը: Այս շատ կարևոր իրադարձություն է, և այն մարդիկ, որ այսօր հեթանոսության մասին են խոսում, պարզապես անգետ մարդիկ են: Ուրեմն, միաստվածյան առաջին կրոնը հանդիսացավ մովսեսականը, որ կազմավորվեց վերջնական ձևով Մովսեսի օրենքներով: Մեր օրերում միաստվածյան ցլխավոր կրոններն են՝ մովսեսական կրոնը, քրիստոնեականը և մահմեդականը: Կան անշուշտ մասն ուրիշ կրոնքներ, առավել կամ նվազ չափով միաստվածյան, կամ մուցնիսկ առանց Աստուծո, ինչպես է, օրինակ, բուդայականությունը:


Քրիստոնեությունը սկսավ Հրեաստանից: Հիսուս հրեա ժողովրդի զավակ էր, ինչպես գիտեք: Մենք այսօր էլ համարում ենք Նոր Կտակարանը շարունակությունը Հին Կտակարանին: Եվ իրավամբ այդպես է: Սակայն մի քանի հարց պետք է դնենք: Ինչո՞ւ համար հրեա ժողովուրդը քրիստոնյա չդարձավ: Այս հարցի պատասխանը պարզ է: Հրեա ժողովուրդը, ինչպես գիտենք, մկատում է ինք իրեն ընտրյալ ժողովուրդ այն խոստումի հիման վրա, որ Աստված կատարած էր Աբրահամին և հետո Մովսեսին: Ընտրյալ ժողովուրդ, որ սպասում էր իր Փրկչի գալստյան՝ Մեսիային: Հիսուս այդ Մեսիան եղավ, սակայն Հիսուս չեղավ Փրկիչ միայն հրեա

ժողովրդի համար, այլ ամբողջ մարդկության համար: Այդ չկարողացան հասկանալ կամ ընդունել հրեաները: Թեև, ինչպես գիտեք, պատմականորեն առաջին քրիստոնյա համայնքները կազմած են հրեաները թե՛ Երուսաղեմում, թե՛ նույնիսկ Աթենքում առաջին դարու կեսերին: Բայց քրիստոնեական Եկեղեցու համամարդկային առաքելությունը վերջնապես հաստատվեց առաքյալների ժողովին Երուսաղեմում, ուր վեճ եղավ նրանց միջև: Հակոբոս առաքյալը հակված էր հրեական տեսակետին, որ միայն թլփատվածները կարող են քրիստոնյա լինել, այսինքն միմիայն հրեաները, մինչդեռ Պողոս առաքյալը մանավանդ, վճռական դեր կատարեց և լուսաբանեց ամբողջ խորհուրդը՝ Քրիստոսի ծննդյան իբրև Աստուծո որդու և Փրկչի բոլոր մարդկանց: Այս ձևով ընդունվեց այն տեսակետը, որ նաև ո՛չ հրեաները, ո՛չ թլփատվածները կարող են քրիստոնյա լինել: Հիշենք Պողոս առաքյալի նշանավոր խոսքը.՝ «2Իք խտրություն հրեից և հեթանոսաց»: Հեթանոսաց ասելով հասկանում ենք բոլոր մյուս ազգերը: Այսպես է, որ քրիստոնեությունը համամարդկային բնույթ և առաքելություն ստացավ: Սա էլ պատմական հիմնական շրջադարձ հանդիսացավ քրիստոնեական կրոնի նկատմամբ մարդկության ունեցած ըմբռնումի տեսակետից:

Այսպես է, որ հրեաները մնացին մոլսեսական Հին Կտակարանով միայն, չընդունեցին Նոր Կտակարանը: Եվ մինչև այժմ նրանք սպասում են, որ իրենց համար մի Փրկիչ պետք է գա՝ իրենց Մեսիան:

Այսպիսով, քրիստոնեությունը զարգացավ և միջազգային տարածում ստացավ: Եթե քրիստոնեական կրոնը մնար միայն հրեաների համար, այն կմնար մինչև այսօր երևի սահմանափակ մի կրոնք միայն հրեական կյանքի շրջագծից ներս: Բայց պատմությունը այլ ճանապարհ բացեց: Քրիստոնեության ճշմարիտ ճանապարհը, այն ճանապարհը, որ թելադրված է նույն ինքն Հիսուսից: Ով որ ճիշտ է հասկանում Քրիստոսի Ավետարանը, նա ըմբռնում է հստակ կերպով, թե դա միայն մի ժողովրդի համար չէ, այլ ամբողջ մարդկության համար է, բոլոր ազգերի համար է հավասարապես:

Առաքյալները, մանավանդ Պողոս առաքյալը իր ամուր հավատքով և հզոր իմացականությամբ, նաև Աստվածաբանական խորիմաստ բանաձևվումներով, կարողացավ ձևակերպել, բյուրեղացնել քրիստոնեական մտածողությունը որ հիմքը հանդիսացավ նոր հավատի հաստատման և տարածման: Այդպիսով, քրիստոնեական կրոնը արագ թափով, գրավեց ամբողջ հին աշխարհը: Հարյուրավոր ազգություններ հետզհետե հարեցին քրիստոնեությանը, թեև հալածված երկու-երեք դարեր, բայց հենց այդ հալածանքը ավելի ևս հրահրեց, ավելի ևս պայծառացրեց քրիստոնեական հոգեբանությունը և գաղափարախոսությունը: Մանավանդ այդ զգում ենք, երբ կարդում ենք քրիստոնյա մեծ հեղինակների գործերը, առաջին չորս դարերի ընթացքում: Այդ գրականությունը մի հոյակապ պատկեր է ներկայացնում: Թե՛ Արևելքի, թե՛ Արևմուտքի տասնյակ հեղինակներ, որոնք փառքն են կազմում քրիստոնեական ոգու և դավանանքի, որոնք պայքարել էին հեթանոսության դեմ, կուռքերի դեմ, մանավանդ Հռոմեական կայսրության այն ժամանակվա բազմաստվածության ըմբռնումների դեմ: Հալածված լինելով, նրանք առավել ևս կարողացան քրիստոնեության պաշտպանությունը և ջատագովությունը հասցնել ստեղծագործ բարձունքների: Գուցե եթե այդ հալածանքները չլինեին, քրիստոնեությունը առավել դանդաղ տարածվեր: Քրիստոնեական ոգին ուղիղ հասկանալու համար այդ հեղինակները պետք է կարդալ: Առանց դրանց չի կարելի հարազատորեն ըմբռնել, հասկանալ,



արժևորել քրիստոնեական գաղափարախոսությունը: Անշուշտ, ավելի ուշ էլ շատ աստվածաբան հեղինակներ եղան թե՛ լատիններու մոտ, թե՛ բյուզանդացիների: Նրանք էլ իրենց արժեքը ունեն անտարակույս, բայց առաջին չորս դարերի հեղինակներն են, որոնք հիմնական ամուր, հաստատ հիմքերը դրեցին քրիստոնեական հավատքին, քրիստոնեական գաղափարախոսության, քրիստոնեական Եկեղեցու՝ ընդդեմ բոլոր տեսակի բազմաստվածյան դավանանքների և աղանդների:

Հաջորդ հարցումը, որ կարող ենք դնել, ինչո՞վ կարող ենք նկատել քրիստոնեությունը համամարդկային: Նախ կրկնեմ, որ Քրիստոս ոչ թե մեկ ազգի համար եկած էր իբրև Փրկիչ, այլ ամբողջ մարդկության համար, բոլոր ազգերի համար: Երկրորդ, ազգերի, ցեղերի, ժողովուրդների միջև անխտրականության ոգիով: Սա շատ կարևոր է և այժմեական: Քրիստոսի համար բոլոր ժողովուրդները հավասար են, բոլոր մարդիկ նույնպես հավասար են, իբրև Աստուծո որդիներ: Հետևաբար, բոլորը եղբայրներ են, անկախ թե ինչ լեզվով են խոսում կամ ինչ հողամասի վրա են բնակվում աշխարհի վրա: Հետո մադրասիրական, հումանիստական ոգով քրիստոնեությունը գերազանցապես մարդասիրական կյանքի փիլիսոփայություն է: Դրա համար Հիսուս մենք նկատում ենք, ինչպես գիտեք, Իշխան Խաղալության: Քրիստոնեությունը համամարդկային է նաև արդարության գաղափարով, մարդկային արդարության զգացմունքը գերազանցապես քրիստոնեական գաղափար է և առաքինություն, դրա համար էլ Հիսուսին մենք նկատում ենք Արեգակ Արդարության: Հետո, կարևոր մի զգացմունք, որ նույնպես քրիստոնեական է՝ գութի զգացումն է: Հելլենական փիլիսոփայությունը, գրականությունը հեթանոսական շրջանին, որ իմացական ու բարոյական տեսակետից բարձունքների էր հասել, պետք չէ ժխտել այդ բոլորը, բայց գութի, կարեկցության և ներողամտության զգացմունքները գրեթե բացակա էին հասարակական կյանքից: Առաքյալը մի տեղ ասում է. «Կարեկցությունը, գութը, սերը, ազգականների, բարեկամների նկատմամբ՝ այդ հեթանոսներն էլ ունեն: Քրիստոնյան այդ զգացմունքները պետք է ունենա նաև անծանոթների նկատմամբ»: Ասյալես է, որ քրիստոնեական բարոյականը հասնում է մարդասիրության գաղափարի բարձունքներին: Քրիստոնյայի համար Աստված երաշխիքն է բարոյական սկզբունքների, մարդասիրական սկզբունքների, սիրո, խաղաղության ու արդարության սկզբունքների, նաև ազատության, որովհետև Աստված մարդուն ստեղծած է ազատ հոգով:

Այստեղ մի պարագա ուզում եմ հիշել: Դուք գիտեք, որ անցյալ տարի ֆրանսիական հեղափոխության երկու հարյուր տարին տոնվեց: Եվ Փարիզում, հուլիսի 14-ին, մեծ հանդիսություններ տեղի ունեցան: Եվ ֆրանսիական կառավարությունը հրավիրած էր աշխարհի գրեթե բոլոր մեծամեծները: Այսպիսով, ներկա եղան շատ մեծ պետությունների նախագահները և վարչապետները՝ հարգելու համար 1789-ի ֆրանսիական հեղափոխությունը, որը հռչակած էր երեք հիմնական մեծ սկզբունքներ, երեք կարգախոսներ՝ հավասարություն, եղբայրություն, ազատություն:

Փարիզ էր ժամանել նաև Մեծն Բրիտանիայի վարչապետ տիկին Թեյլերը՝ մասնակցելու հանդիսություններին: Ֆրանսիացի մի թղթակցի նա հայտարարել էր, որ ֆրանսիական հեղափոխության սկզբունքները այնքան էլ ձերը չեն, դրանք սկսած են քրիստոնեությունից և հրեաներից երկու հա-

զար տարի առաջ: Ֆրանսիացիները մի քիչ նեղվել էին գուցե, բայց ճիշտն առած, տիկին Թետյերը իրավացի էր: Ֆրանսիական Մեծ Հեղափոխության մարդասիրական, հումանիստական գաղափարների ակունքները գրտնըվում էին իրոք Քրիստոսի Ավետարանի մեջ:

Մի քանի խոսք էլ քրիստոնեության և հայ ժողովրդի մասին: Հայ ժողովուրդը աշխարհի այն քիչ ժողովուրդներից մեկն է, որ Քրիստոսի Ավետարանի լույսը ընդունեց ուղղակի բուն աղբյուրից, ակից, ոչ թե ընդօրինակեց, ոչ թե ներմուծեց ուրիշ քրիստոնյա երկրներից: Այդպես են մասնակցությունները անշուշտ, և ուրիշ մի քանի ազգեր: Բայց մենք մեր մասին խոսենք: Սա կարևոր հանգամանք է:

Քրիստոնեությունը և Հայ Առաքելական Եկեղեցին, որ նրա մարմնավորումն է, ամեն ինչով ինքնուրույն է, ամեն ինչով յուրահատուկ: Մենք՝ հայերս, մեկ ենք բոլոր քրիստոնյաների հետ Քրիստոսի Ավետարանով: Բայց տարբերվում ենք մեր լեզվով, մեր ամբողջ կրոնական գրականությամբ, մեր աստվածաբանությամբ, մեր սրբերով: Գրական-բանաստեղծական տեսակետից էլ հայ ժողովուրդը քրիստոնեությունը ընդունած է և ապրած է ստեղծագործորեն, իր անհատականության դրոշմը դնելով իր կրոնական կյանքի բոլոր դրսևորումների վրա: Տարբերվում ենք մասնաճյուղներից, մեր Եկեղեցիների ճարտարապետությամբ, որ լրիվ ինքնուրույն է, ազգային է, տարբերվում ենք եկեղեցական մանրանկարչությամբ, մեր կրոնական երաժշտությամբ, մեր ծիսական արարողություններով, մեր ծիսական զգեստների ձևերով մույնիսկ: Ամեն ինչի մեջ ինքնուրույն ենք: Ահավասիկ ինչ կնշանակե Հայաստանյայց Եկեղեցի և հայկական քրիստոնեություն: Հայ ժողովուրդը քրիստոնեությունը ընդունած է և ապրած ու ճառագայթած ստեղծագործորեն: Այսօր էլ մենք մույն դիրքերի վրա ենք կանգնած: Էկումենիկ հարաբերությունների մեջ ենք, անշուշտ, բարեկամական, եղբայրական, սիրո հարաբերությունների մեջ, բոլոր քրիստոնեական եկեղեցիների հետ: Բայց մենք մեր տան մեջ անկախ պետք է ապրենք և ինքնուրույն: Մենք կարիք չունենք որևէ ներմուծում անելու ո՛չ Բյուզանդական Եկեղեցուց, ո՛չ լատիններից, ո՛չ էլ սլավոններից:

Հայ Առաքելական Եկեղեցին քրիստոնյա եկեղեցիների ընտանիքից է, Տիեզերական Եկեղեցուց անբաժան, իրեն հավատով ազգային ձևերի մեջ կադապրված:

Մնում է, որ մենք ամուր, հաստատակամ գիտակցությունը ունենանք, որ հայոց քրիստոնեությունը մարմնավորված է 17 դարերի հոլովույթով, Հայ Առաքելական Եկեղեցիով, որ մի գլուխգործոց է այսօր և համամարդկային կյանքի մակարդակի վրա, թե՛ համար մի պարծանք: Մենք պարծենալու այլ արժեքներ էլ ունենք: Զուտ, իբրև ազգ, բայց կարծում եմ, չեմ չափազանցնում, եթե ասեմ, որ աշխարհի առաջ առավելապես կարող ենք պարծենալ մեր քրիստոնեությամբ, մեր քրիստոնեական արժեքներով և մեր Առաքելական Ազգային Մայր Եկեղեցիով:

Մենք՝ հայ հոգևորականներս, այս օրերին, երբ լայն ասպարեզ է բացված մեր առջև, հարկ է, որ կարողանանք մեր պարտքը կատարել: Մենք տկար ենք տակավին, հունձքը շատ է, մշակները՝ քիչ: Հետզհետե պետք է շատանանք, զորանանք, որպեսզի իսկապես մեր ժողովուրդը դառնա հարազատ կերպով քրիստոնյա ժողովուրդ ոչ միայն խոսքով, այլ մասն իր կենցաղով, իր բարոյականով, իր նկարագրով, իր ազգային մշակույթի կյանքով, ինչ որ դժվար է մեր օրերին, ոչ միայն մեզ մոտ, այլ մասն ամ-

բողջ աշխարհում: Այս օրերս կարդում եմ մի ֆրանսերեն գիրք, կաթոլիկ աստվածաբանի գործ, որ խիստ գանգատվում է կաթոլիկ աշխարհից եկեղեցական տեսակետից, կրոնական տեսակետից: Ամեն տեղ այսօր, Արևմուտքում, պայքար է մղում հոգևորականությունը, որպեսզի Եկեղեցին իր դերը կարողանա կատարել և մարդու հոգեկան ու ընկերային կյանքը բարեշրջել Քրիստոսով:

1987 թվականին Փարիզ այցելեց Մահաթմա Գանդին: Այն ատեն Հնդկաստանը ազատագրված չէր տակավին, Բրիտանական կայսրության գաղութ էր: Եվ ինքը, հեղափոխության ջանք ձեռքին, աշխարհով մեկ շրջում էր՝ իր հայրենիքի ազատագրությունը երազելով: Նա մեծ հեղինակություն ունեցող անձնավորություն էր մասն քրիստոնեական աշխարհի մեջ: Փարիզում նրան Սորբոն դասախոսության էին հրավիրել: Սորբոնի համալսարանում ներկա էին բազմահարյուր դասախոսներ, մտավորականներ, թերթերի թղթակիցներ և ուսանողներ, բոլորն էլ ֆրանսիացի և բոլորն էլ կաթոլիկ կամ բողոքական: Նա իր խոսքի վերջում Հիսուսի մասին էլ էր խոսել, փառաբանելով Նրա Ավետարանը: Հետո կանգ էր առել և իր շուրջը նայելով ասել էր. «Չգիտեմ, ձեր մեջ քրիստոնյաներ կա՞ն արդյոք»: Այդ հարցումը հիմա էլ կարելի է տալ ամեն տեղ գրեթե: Այո, մենք մեր փոքրածուի սահմանների մեջ աշխատենք մեր պարտքը կատարել և մեր ժողովուրդն ու մեր Եկեղեցին հասցնել այն բարձունքին, որին արժանի են նրանք՝ իբրև քրիստոնյա ժողովուրդ և իբրև քրիստոնեական պատմական, վավերական Եկեղեցի:

Աստված մեզի օգնական. ամեն:

